ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՍԱՄՎԵԼ ԼԵՎՈՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԱՐՏՈՆԱԳԻՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 2-րդ մասի և 33-րդ հոդվածի պահանջները,

հաշվի առնելով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արմեն Խաչատրյանի 23.12.2014թ. գրությունը (մուտքի համար 509) և կից ներկայացված նույն դատարանի թիվ ԵԱՔԴ 0015/01/14 քրեական գործով դատավճիռը (**օրինական ուժ է ստացել 28.11.2014թ.**), ըստ որի՝ ՀՀ փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** փաստաբան Սամվել Լևոնի Մարտիրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերով և դատապարտվել է ազատազրկման 3 տարի 6 ամիս ժամկետով,

նկատի ունենալով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջն առ այն, որ *անձը չի կարող լինել փաստաբան, եթե դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ,*

ի գիտություն ընդունելով այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով սահմանված «խարդախության» հանցակազմը բնորոշվում է որպես *խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը,* իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածով սահմանված «կաշառք տալու» հանցակազմը բնորոշվում է որպես՝ *պաշտոնատար անձին անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ իր կամ իր ներկայացրած անձանց օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով*

24 դեկտեմբերի 2014թ.
թիվ 426-Ա
ք. Երևան

այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար, որոնք իրենց հերթին դասվում են դիտավորությամբ կատարվող հանցագործությունների շարքին,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Դադարեցնել Սամվել Լևոնի Մարտիրոսյանի փաստաբանական գործունեության թիվ 347 արտոնագրի գործողությունը՝ այն ճանաչելով ուժը կորցրած:

2. Սամվել Լևոնի Մարտիրոսյանին հանել ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանների ցուցակից:

3. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Իրինա Փիլոյանին՝ սույն որոշման օրինակն ուղարկել Սամվել Լևոնի Մարտիրոսյանին:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով մեկամսյա ժամկետում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան

24 դեկտեմբերի 2014թ.
թիվ 426-Ա
ք. Երևան